





Dr. A. IV. I.

ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ

23

809  
P

# ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

(V ԵՒ VI)


A<sup>III</sup>  
1626



**Վաղարշապատ**

**Տպարան Ս. Էջմիածնի**

**1908**




UNIVERSITY OF TORONTO

UNIVERSITY OF TORONTO

1900

UNIVERSITY OF TORONTO  
1900



## ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

V

Փարիզ եւ Պօլիս:—Արեւի Չոպանեան եւ Ադամ Եար-  
նանեան:—Նոր տաղանդ՝ Միսաք Մեծարեանց:—Վահրամ  
Թաթուլի ոտանաւորը եւ Ե. Թօլայեանի նմանողութիւնը:

Ա.

Ամէն անգամ երբ կարդում եմ Ա. Չոբանեանի  
քննադատական յօդուածները եւ նախանձում եմ նրա  
ճշիւ լեզուին, նրա ունեցած բազմակողմանի տեղեկութիւն-  
ներին մեր հին և նոր, արեւելեան և արևմտեան հայ  
գրականութեան մասին: Նա քաջ ծանօթ է և օտար գրակա-  
նութիւններին. եւ մինչև իսկ կարծում եմ, որ նրանից  
աւելի լաւ իմացող արգի ֆրանսական գրականութիւնը  
հաղիւ թէ մենք ունենք մի ուրիշը: Նա ունի գրիչ, նա  
ունի ճաշակ. գրական գեղարուեստական քննադատութիւ-  
նը, իմ կարծիքով նրա իսկական ասպարէզն է: Նրա գրած-  
ները նարեկացու, Քուշակի, Պէշիքթաշլեանի մասին անյետ  
չեն կարող կորչել մեր գրականութեան մէջ:

Բայց բանաստեղծ է արգեօք պ. Արշակ Չոպանեանը:  
Երկու անգամ կարգացի եւ նրա նորերս հրատարակած  
Քերթուածներ անունը կրող բանաստեղծութիւնների ժո-  
ղովածուն, բայց մի բաւականութիւն շտապայ. ծիշտ է  
հարիւրից աւել մանր ու մեծ ոտանաւորների մէջ կան  
չնորհալի կտորներ, բայց նրանք կորչում, կարելի է ասել՝  
տարրալուծում են ընդհանուր անկենդանութեան մէջ:  
Եւ տեսնում եմ այստեղ և խելք, և ճաշակ, և զգայուն  
սիրտ, և հարուստ լեզու, և արհեստ, բայց արուեստ,  
պօէզիայ, այն անկեղծ պարզութիւնը, որի կենդանարար  
ջրով պէտք է սրսկուած լինի ամէն մի իսկական բանաս-

տեղծութիւն—ես չեմ տեսնում կամ լաւ է ասել՝ շատ  
քիչ եմ տեսնում:

«Արեալոյս» բաժանմունքի առաջին ոտանաւորը հե-  
տևեալն է՝

Կը վերածնի հուրն Ոչընչին արգանդէն.

Կը կարմըրին կատարները լեռներուն.

Կը հագնի ծովը ծիրանի սարսըռուն.

Այգուն սլաքներն են որ գիշերն կը քանդեն:

Կը կարմըրին կատարները լեռներուն.

Բոցեր կժայթքեն երկնքին մաայլ անգունէն.

Այգուն սլաքներն են որ գիշերն կը քանդեն,

Պատուելով մութն ու վանելով զայն հեռուն:

Բոցեր կժայթքեն երկնքին մաայլ անգունդէն.

Կը ցընդի ստուերն ալիքներով դաւարուն:

Պատուելով մութն ու վանելով զայն հեռուն,

Արևը դուրս կը նետուի խոր իւր բանտէն:

Կը ցընդի ստուերն ալիքներով դաւարուն.

Կարթըննայ սևըն ու թըռչուններն կը քերթեն.

Արևը դուրս կը նետուի խոր իւր բանտէն.

Քաղցրը պահն է. կեանքի դարթօնքն է ոիրուն:

Արդեօք պրօֆան ընթերցողը նկատեց ինչու՞մն է կա-  
յանում այս ոտանաւորի տարօրինակութիւնը. Ահա թէ  
ինչում՝ հայ պառնաստկանը արուեստօրէն ամէն մի հե-  
տևեալ տունի մէջ կրկնում է նախընթացի երկրորդ և  
չորրորդ տողերը և այնպէս, որ նախընթացի երկրորդը  
գառնում է հետևեալի առաջին տողը, իսկ չորրորդը—  
երկրորդ. Բայց ի՞նչ դուրս եկաւ դրանից. ոտանաւորը  
դրանից ոգի ու թռիչք չստացաւ, այլ միաց նոյնը, թէպէտ  
և բաւականի պատկերաւոր. Արդէն այս ոտանաւորը բա-  
ւականին շինած է, իսկ կան այնպիսիները, որ բանաս-  
տեղծը յատկապէս նստել շինել է—շինելու համար Դրանք  
աշխարհ են եկել գլխից և ոչ թէ սրտից, զգացմունքներից:

Անարդարութիւն կլինէր ի հարկէ այստեղ ցոյց չտալ  
և այն ոտանաւորները, որոնք բանաստեղծի սրտից բըղ-  
խելով և անկեղծ զգացմունքով ցօղուած լինելով, ակամայ



գրաւում են ընթերցողի ուշագրութիւնը: Ահա մի տենչոս  
ստանաւորի առաջին տուները՝

Կը նախանձեմ երջանիկ  
Ըզդեստներուդ, որ մտէն  
Երենց ծաբին մէջ փափկիկ  
Քու մարմինըդ կը գըրկեն:

Կը նախանձեմ սիւքերուն  
Որ մագերդ կը շայեն,  
Ամբիծ աստղին իսկ սերուն  
Որ կը ժըպտի քեզ վերէն:

Բայց ոտանաւորը երկարացրած է և ի վերջոյ ձան-  
ձրալի է դառնում:

Սիրուն ոտանաւոր է նոյնպէս Գիւեքին մէջ՝

Գեշերէն մէջ ծովափ դասի  
Ու սև տեսայ ջուրերը լաւու.  
Ու սև ջուրերն ըսին ինձի  
« Եկուր, եկուր . . . »

Այստեղ կայ սրոջ տրամագրութիւն, որը ընդունակ է  
ընթերցողի մէջ ևս նոյնպիսի տրամագրութիւն ստեղծել—  
իսկ դա ամէն մի գեղարուեստագէտի նպատակը պէտք է  
լինի:

Բայց, օրինակ, ինչ ասենք գրեթէ նոյն երեսի վերայ  
գետեղուած Ցայգեբգ՝ի մասին, որի բովանդակութիւնը  
շատ հեռու է Nocturne յիշեցնելուց. ահա մի նմուշ այդ  
բունագրօսիկ ոտանաւորից՝

Հո՞՞ մարդկութիւն մը, անորոշ, անծանօթ,  
Ձորադիս կոռնայ կը խնդայ.  
Սըմարանին քրանած օդին մէջ հեւքոտ,  
Ուր կը վառին սուրտ շըթօւնքներն էգերուն

Արունքու նայուածքին տակ մոլորուն,  
Ցած հըրճուանքի խըժուկ մ'յամառ կը թընդայ.  
Ու հոգիիս պաղ պարասպին մէջ աղօտ  
Չանձրոյթ մը խուլ կը հընդայ:

Եւ այսպէս մի քանի տասնեակ տողեր ու ոտանա-  
ւորներ, որոնցով Արշակ Չոպանեանի նման ընդունակ և

տաղանդաւոր հայը իր տուրքն է տալիս Բողոքներն եւ Վերլէններու քնարին . . . .

Բ.

Բայց ով կատարելապէս տարուած է Փրանսիացի դէկադէնտներով, սիմբոլիստներով և տարօրինակ ճաշակի մօղէնիստներով դա Ադամ Եարճանեանն է, Սրա բանաստեղծութիւններն էլ Փարիզումն են լոյս տեսել, ուստի և դարմանալի չէ Փրանսիականի ազդեցութիւնը, թէպէտ և ցանկալի կլինէր, որ մերոնք օտարի լաւ կողմերից ազդուէին և ոչ թէ անմարտելի դատարկութիւնից, Նոյն Բողոքն և Վերլէնը, ինչպէս նաև Էդգար Պօ, Մէտերլինգը, Մալարմէն, Վիլիէ տը Լիլ Ադանը, Ռօդէնրախը, վերջապէս Վէրհարնը և այլք ունին հիանալի բանաստեղծական կտորներ—ինչո՞ւ նրանցից չազդուել և մինչև իսկ չթարգմանել, Ոչ, պ. Եարճանեանը ընկնում է հիւանդոտ գրականութեան ազդեցութեան տակ և տալիս մեզ «Հոգեվարժի եւ յոյսի ջաները» որ չգիտես ինչ տեսակի գրուածք է՝ արձակ ասես—արձակ չէ, ոտանաւոր ասես—ոտանաւոր չէ, Եւ եթէ հեղինակը չի ուզում չափ պահպանել—ինչ հարկ կայ ոտանաւորի պարտադիր ձևը դորձածել, Հեղինակը բառերի մեծ պաշար ունի, բայց նա դրանով չի բաւականանում և այնքան նոր բառեր է յօրինում և վրայ-վրայ կուտակում, որ ընթերցողը ապշած մնացած՝ չի իմանում ուր է կորել, միտքը, գաղափարը, Յակամայից յիշեցի ծանօթ աֆօրիզմը՝ բառերը մեզ տրուած են մեր մտքերը ծածկելու համար, իսկ զգացմունքի մասին ես չեմ էլ խօսում, ես այդ գրքի մէջ զգացմունք չտեսայ և ոչ էլ ճաշակ, թէպէտ և Ռուբէն Զարդարեանը յառաջաբանում, իսկ պ. Ա. Սհարոնեանը մի բանասիրականում աշխատում էին համոզելու, որ Ադամ Եարճանեանը ազգային հանճար է, Հաւատացողը թող հաւատայ, իսկ ես կըբերեմ մի քանի նմուշներ ցոյց տալու համար Եարճանեանի քնարի հիւանդոտ տարօրինակութիւնը.

Աւերումի գիտեք.

Բոլոր վերաւոր և մահաբաղձ հոգիներն, այս իրիկուն, Վերջալոյսին մոտիկներուն վրայ յուսահատօրէն հակած՝ Իրենց սարսափը և վերահաս ազէտքը կուլան ... ւայլն:

Ա Բ Ի Լ Ե

Դժգունօրէն յոյսին բոլոր շուշանները թափեցան,  
Օրերուն անդթութեանը մարմարներէն ի վար,  
Մահադուժօրէն և անդադար.

Եւ արըշիւ և ուխտուած հոգիները այլ ևս հանեցին,  
Իրենց յաղթանակի եւ երազի վերահիւսն երկար,  
Գերեզմանուող իրիկուններուն հետ,  
Եւ աւերում համայնապատկերին դիմաց  
և այլն և այլն

Մի երկու այսպիսի պատկեր, մի երկու այսպիսի ասոյ ընաստեղծութեան մէջ դեռ հասկանալի է, բայց եթէ այսպէս հարիւրաւոր տողեր են շարում—դա արդէն զառանցանքի տպաւորութիւն է թողնում և ոչ թէ հեղինակի ցանկութեան համեմատ տխրութիւն և արցունք է առաջացնում մեր մէջ—այլ ծիծաղ և ձանձրոյթ:

Եւ այս ճոխ լեզուն և բազմաշոյ պատկերաւորութիւնը կորչում են ի զուր, աննպատակ, որովհետեւ նա ընթերցող չի գտնի եւ ինչո՞ւ. որովհետեւ հեղինակը սարուկ է մօդայի, մօդէօնիզմի, որոնք պարզ պօէզիան մի կողմ թողած՝ և զգացմունք և բանականութիւն զոհ են բերում սիմբօլների կուտակման, գիտակցական տարօրինակութիւններին:

Իսկ հետեանքը՝ oleum et diem perdidit ...

Գ.

Յաւալին այն է, որ Ա. Եարճանեան մենակ չէ. կան և ուրիշները—մանաւանդ Պարիզում և Պօլսում:

Կայ դրանց թւում մէկը՝ Միսաք Մեծարենց, որը Միաժանից յետոյ տուել է նոր տաղեր: Պէտք է ասել, որ Պօլսում շատ աւելի են հետաքրքրում գեղարուեստական գրականութիւնով, քան թէ մեղ մօտ. Այնտեղ,

օրինակ, «Զիֆթէ Սարաֆօի գրուածքի առթիւ ահագին բանակաւ տեղի ունեցաւ պարբերական մամուլի մէջ. Մ. Մեծարենցի անունը մի քանի ժամանակ բոլոր հօլովներով հօլովում էին: Ես չեմ կարգացել նրա բանաստեղծութիւնները, բայց մի ըստէ Յակոբ Տէր Յակոբեանին\*) հաւատարմով կարծում եմ, որ տաղանդաւոր բանաստեղծ է լինելու Մեծարենցը: Յօդուածի մէջ բերուած օրինակներն էլ ցոյց են տալիս, որ երիտասարդ հեղինակը թէպէտ և սիրում է խօսել սիմբոլներով (խորհրդանշով—ինչպէս ասում է յօդուածագիրը) ու տարօրինակ ձևեր ունի, բայց ունի և զգացմունք, և աւիւն և նուրբ արտայայտութիւնների շնորհք՝ օրինակ—

Երեկ գեշեր մոռցեր էիւ լուսնս՛հ, դետես  
 Երեկ գեշեր մոռցեր էիւ պատուհանիկս իմ համեստ,  
 Պատուհանիկս իմ անաս՛  
 Ու մութ մը գորշ վեճակի պէս էր կախուեր...

Յօդուածը վերջանում է հետևեալ եզրակացութեամբ «Մեր սերունդը ուրախ է որ իր մէջ կրնայ ցոյց տալ բանաստեղծ մը որուն քով երեւակայութիւն, Ջգացում ու Արուեստ ձեռք ձեռքի, հաւասար եղբայրակցութիւնով մը կը խանդավառին, և որուն քով Գաղափարն ալ իր նշոյլներով կ'օսկեղծէ հորիզոնը, գաղափարը՝ որ անայլայլ նշանակէտը պէտք է ըլլայ գրականութեան և արուեստին»:

Այլ կարծիքի է «Արեւելք»ի Փայլակ յօդուածագիրը.\*\*)  
 Նա ոչ մի արժէք չի գտնում Մեծարենցի քնարի մէջ: Սակայն նկատելու է որ յօդուածագիրը բաւականին բծախընդիր է և ճաշակի կոզմից էլ ոչ այնքան հարուստ օրինակ:

Արեւ ծիծաղի, ծաղիկ ծաւերու  
 Տօղի մէջ լսուժաւոր նոյնակայնութիւն է՝ գտնում:  
 Մեծարենցը պէտք է աշխատի ապագայում աւելի մօտենալ ժողովրդին և թէ լեզուով ու թէ արտայայտելու

\* Տես մտաւորական կեանք յօդուածը Մանգուսի Էֆրեարի. № 4994.  
 \*\*) Տես Արեւելք. 4908 թ. № 6757.

ձևով մօտենայ բուն ժողովրդական երգիչներին, շարունակելով իր գաղափարների ու զգացմունքների համար արտափայլումներ գտնել սիմբոլների մէջ. Բայց գեղարուեստը չափ ու սահման է պահանջում և ով որ անցնում է այդ սահմանը, նա աուժում է: Ձայէտքէ անցնի այդ սահմանը և Մեծարենցը, եթէ ուզում է, որ նրան կարդան և հասկանան: Փոքրամասնութեան համար գրելը, ստեղծելը — գերեզման մտնել է:

Գ.

Ըստ երևոյթին այդ չի ուղում հասկանալ Վահրամ Թաթուլեանը, որը Պօլսում հրատարակուող «Լոյս» շաբաթաթերթի 14-րդ համարում գետեղել է Մառերունցի սակ վերտաուութիւնը կրող ստանաւորը, ո՛րը և նոյնութեամբ բերում եմ այստեղ

### Մառերունցի սակ.

Այնքան բարակ,  
Երկինք մը ծուխ կը տարաղնէ,  
Այնքան բարակ:  
Ծովն ալ հոն է, ձորէն անդին,  
Սարակն և վար,  
Ծովն ալ հոն է, այնքան հանդարտ,  
Այնքան եղբայր՝  
Այնքան եղբայր իմ երազիս:  
Մահոյցի մը խորհուրդն ալ հոն  
Կը տարագրի գիշերին մէջ  
Քաղցր ու հանդարտ:  
Ու լուսինկան,  
Որուն արծաթը կապտորակ՝  
Կը սորսորի, այնքան բարակ.  
Ծառերն ի վար, այնքան բարակ.  
Ու լուսինկան, որուն խօսքս  
Կը խնկէ ծուխն իր պատարագ,  
Ու լուսինկան, ձիւնէ՛ համակ  
Իր գգուանքով լսյն ու ճերմակ,  
Ծորճրակիդ շուրջ կը յօրինէ,

Մործբազիզ շուրջ, համակ ձիւնէ,  
Մեհեւանդ մը—ճ՛վ մարբութիւն—

Մեհեւանդ մը, այնքա՛ն բարակ,  
Ա՛յնքա՛ն լիշրուն,  
— Զքնա՛յ ինչպէս լուսաղբուսակ:

Լուսաւորի ցուրեր թռչուն,

Ա՛յնքան բարակ,

Երգերուդ մէջ կետէանան,

Երգերուդ մէջ՝ այնքա՛ն ճերմակ:

Ա՛յնքան ճերմակ, այնքան դունտա,

Ազու այնքայն,

Որ Լուսթիւնն է յուսահատ,

Լքու թիւնը՝ անբիծ այնքա՛ն:

\*

Մառերուն տակ... հովն ալ հոն է,

Ա՛յնքան բարի, այնքան հանդարտ—

Երկինք մը ծուխ կը թռցնէ

Ա՛յնքան հանդարտ,

Որ, սահուելով ուղէ՛շներէն,

Երգերուդ հետ, ծըւէ՛ն ծըւէ՛ն:

Կը բարձրանայ՝

Դէպի լուսինն այնքան բարակ,

Ա՛յնքան բարակ...:

Փոխանակ իմ կարծիքս յայտնելու այս ոտանաւորի մասին ես բարւոք եմ՝ համարում՝ բերել այստեղ երգի-ծարան Երուանդ Թօլայեանի նմանողութիւնը,\*) որով ամեն ինչ ասած կլինինք:

Երարուս ամէնէն դերահանճար ու տաղանդաւոր բանաստեղծն է Միսաբ Մեծարե՛նց.— ասում է Թօլայեանը—, անկէ վերջը կուգայ Վահրամ՝ Թաթուլ, ուրիշ բացատրութիւնով... Միսաբ Մեծարե՛նցի եամախը, որուն «ձայնիմ մէջ լուսուոր Եարժումներ կը լսուին»: Իրարմէ հասկնալի ոտանաւորներ կը գրէ այս տղան ամէն ատեն, որոնք գլուխ գործոցներ են «կապոյտ երգի եւ հոսաւէսիմացականութեան»:

\*) Տես Մանգումի կէրբար, 1908, թիւ 209 1:

Խորհրդապաշտ բանաստեղծ մըն է անիկա, որուն քերթուածները կրնան իբր մէյմէկ հանելուկներ առաջարկուիլ Հանրագիտակի ընթերցողներուն, հանելուկը լուծողին ուղածնիդ առաջարկելով իբր նուէր, քանի որ վստահ էք թէ ոչ ոք պիտի կրնայ լուծել զանանք:

Այդ, Վահրամ Թաթուլ անցած շաբթու ոտանաւոր մը գրած էր Լոյսի մէջ, ուրկէ՝

Բան մը չհասկցայ ես:

Ընթերցողներն ալ բան մը չհասկցան, գրաշարներն ալ:

Ինք ալ բան մը չէր հասկցեր:

Խմբագրապետը չի գիտեր թէ պէտք է հասկցած ըլլայ:

Ամէն պարագայի մէջ Վ. Թաթուլի հետևողութեամբ ես ալ գրեցի բան մը ուրկէ բան մը հասկցողներուն կը խոստանամ քսան տարուան Մանգումէ, յիսուն տարուան Լոյս, հարիւր հատ սօկի ժամացոյց, հեծանիւ մը, օթոմսպիլ մը, շոգեկառք մը, շոգենաւ մը, և այլն:

### «Ծառերուն ակ»

(Վահրամ Թաթուլ բանաստեղծին)

Ծառերուն տակ, հովն ալ հոն է,

Ա՛յնքան բարակ,

Երկինք տամնոց կը տարազնէ,

Ա՛յնքան բարակ,

Եւ պամպարակ,

Ծովն ալ հոն է, կո՛վն ալ հոն է՝

Ա՛յնքան բարակ,

Ե՛զն ալ հոն է, է՛շն ալ հոն,

Ա՛յնքան քուրբիկ,

Ա՛յնքան քուրբիկ իմ երագիս,

Մակոյիկէ մը խորհուրդն ալ հոն

Ա՛յնքան բարակ, ու աւանակ

Կը սօզոսղի գիշերին մէջ,

Ա՛յնքան բարակ ու իշու ձագ,

Ու երկինքը որուն արծաթը կապտորակ

Կը ճորճորի ս՛յնքան բարակ,

Ա՛յնքան բարակ և պամպարակ,

Մեհեւանդ մը,—սվ փիտութիւն—

Ահեհեւանդ մը, ա՛յնքան հաստկէկ,

Թուշիկեզ շուրջ համակ ձիւնէ,

Ա՛յնքան բարակ,

Ձքնաղ՝ ինչպէս պամպարակ,

Ա՛յնքան բարակ, ա՛յնքան հաստկէկ, հատուքարակ

Որ լռութիւնն է ահա՛ սր

Անձնասպան հ՛ըւսջ,

Հաստկէկ, ճերմակ,

Ու Պամպարակ,

Ծառերու տակ . . . մուկն ալ հո՛ն է,

Ա՛յնքան բարե, ա՛յնքան հաստկէկ,

Կատուն սր ծուխ կը փախցնէ,

Ա՛յնքան բարակ

Որ կախուելով իր պոշիկէն

Կըգեղուդ հեռ ծուէն ծուէն

Կը բաքձրանայ .

Դէպի այերն ա՛յնքան բարակ

Ու պամպարակ . . . .

Բան մը հասկըցա՞ւ-

Կը ցաւիմ՝ որ ամէն մարդ չհասկցաւ այս քերթուածիս բարձր նշանակութիւնը:

Խորհրդապաշտ բանաստեղծութիւնն ըրի այսօր պարոններ: Եւ որովհետեւ ապագան խորհրդապաշտ բանաստեղծութեանն է փափաքեցայ տակաւ վարժեցնել իմ ընթերցողներս անոր: Եթէ գրածէս բան մը չհասկացաք, յանցանքը ո՛չ իմս է ո՛չ ալ Վահրամ Թաթուլի:

Այս գրականութեան սկզբունքն է չհասկացուի՛լ:

Եւ երբ հասկացուի, կը դադարի ալ գրականութիւնըԱՄԻՐ:

Երկու ձեռքով ստորագրում եմ Թօլայեանի ասածի տակ . . . . .

ՄԻՆՆԱ ԲՆՐԲՆԲԱՆ





(Ի. ՏՈՐԳԵՆԵ ԵՆ Լ. ՏՈՒՍՈՅ) :

Ա.

Ռուս գրականութիւնը ռուսահայերիս մտաւոր կեանքի մէջ դուրսէ աւելի մեծ դեր է խաղացել, քան մեր ազգայինը: Կովկասահայ մտաւորականների ստուար մեծամասնութիւնը զարգացել և դաստիարակուել է ռուս հեղինակների գրուածքներով, մինչդեռ Հայոց գրականութիւնը—չեմ ասում հին, դա բազմութիւ խանգարուած ուղեղների համար մի փոսած նիւթ է—մեր նոր, աշխարհաբար գրականութիւնը նոյն այդ մտաւորականների համար կատարեալ terra incoqnita է: Ասում են, թէ մի քանի երիտասարդ բանասէրներ մեր նոր գրականութեան պատմութիւնն են պատրաստել, ուրախալի և մխիթարական երևոյթ: Բայց ինչ անենք, որ միատամանակ տեսնում ենք ուսուցիչներ, որոնք, օրինակի համար, Մուրացանից ոչ մի բան կարգացած չեն, և կան ուսում առած մարդիկ, որոնք պ. Լէօյին հետևելով կարծում են, որ Մուրացանը մարդակերութիւն էր քարոզում:

Ճիշտ է, մենք մեր գրականութեան մէջ ոչ Տուրգենևեւի, ոչ էլ Գոգօլի տաղանդներն ենք ունեցել, այնուամենայնիւ մեր Պուշեանցը, Պարոնեանը կամ Մուրացանը մեզ համար մի մի Գոգօլ ու Տուրգենևեւ են: Ապա մի հարցրէք, տեսնենք ռուս ուսուցիչների մէջ կգտնուին այնպիսիք, որոնք Տուրգենևեւի կամ Գոգօլի գրուածքների հետ ծանօթ չլինին: Իսկ եթէ լինեն, ես հաւատացած եմ, որ գրանց իբրև քացառութիւններ շուտով ցուցահանդէսներում ցոյց կտան:

Եւ մինչդեռ հայ գրականութիւնը այդպէս անարգուած է, ուսու գրականութիւնը մեր մէջ բաւականի վարկ և պատիւ ունի, որի համար ես չեմ կարող իմ խնդակցութիւնս չյայտնել, որովհետեւ աւելի ճոխ գրականութեան հետ ծանօթ լինելը ոչ միայն վնասակար չէ, այլ և ամենայնիւ օգտակար:

Ռուս գրականութիւնը միշտ սիրելի է եղել մեր ընթերցող հասարակութեանը, մասնաւորապէս մեր հայ հեղինակներին: Մեր առաջի գրողներից մինչև վերջինը, թէ ժամանակագրական կարգով առած և թէ ըստ տաղանդի—ազգուել են ուսու հեղինակներից, բայց առաւելապէս բանաստեղծներից, քան թէ վիպասաններից\* Վերջիններիցս ամենից աւելի ազդել են մերոնց վրայ՝ Գօգօլ, Տուրգենև, Դոստոեվսկի, պակաս չափով՝ Գ. Ուսպէնսկիյ, Գարշին, Կօրօլէնկօ, Ջէխով, Դոնշարովի, Գրիգորովիչի, Շչէգրիևի և Տօլստոյի ազդեցութիւնը շատ դժուար է նշմարել մեր արդի վիպասանութեան մէջ: Բայց եթէ ոչ գրականութեան մէջ՝ դոնէ մեր որոշ մտաւորականների զարգացման վրայ անշուշտ անհեռահանք չի անցել Տօլստոյի կրօն—փիլիսոփայական ուսմունքը, եթէ մեզ մտկանոնաւոր և սիտեմատիկ կերպով լինէր թարգմանութիւնը, մենք կարող էինք խօսել այն մասին, թէ որ չափով մեր հասարակութեան սիրելի են Տուրգենևը և Տօլստոյը: Բայց, աւագ, մենք թարգմանում ենք անսխտեմ և անհաշիւ, ում խելքին ինչ որ փչէ՝ Յամենայն դէպս մենք գիտենք, որ թարգմանուած են Տուրգենևի՝ Ռուդինը, Նախընթաց օրը, Հայրեր եւ Որդիներ, Առաջին սէր, Ասիա, Արձակ բանաստեղծութիւններ և այլ մի քանի մանր վէպիկներ. իսկ Տօլստոյից՝ «Մանկութիւն եւ Պատանեկութիւն», «Կրէյցերեան Աօնաք», «Յարութիւն» և մի շարք նրա բրոշիւրներից: Եւ եթէ այդ հեղինակները ընթերցող հայ հասարակութեանը ծանօթ են, դա նրանից

\* ) Այդ մասին մե քանի ուսումնասիրութիւններ ունի արած յայտնի հայասէր Իւրիյ Վեսեղովսկին:

է, որ մենք բոլորս դիտենք և կարգում ենք ուսերէն, իսկ սվ որ չգիտէ ուսերէն՝ նա այդ հեղինակների մասին, մասնաւորապէս Տօլստոյի, ստոյգ դադափար դժուար թէ կազմի:

Բ.

Օգոստոսի 22-ին լրացաւ ուսու նշանաւոր վիպասան Ի. Տօլքենևի մահուան քսան և հինգ ամեակը: Այդ տխուր յորելեանը առիթ տուեց ուսու մամուլին յիշել հասարակութեան ամենասիրելի վիպասանին և ջերմ տողեր նուիրել նրա յիշատակին: Ինչպէս և շատ շատերի նոյնպէս և իմ ամենահաւանած և սրտին մօտ ուսու վիպասանը Տօլքենևն է: Քանի քանի օրեր և դիշերներ ենք մենք նուիրել նրա վէպերի ընթերցանութեան, ինչպէս յափշտակուել ենք, դեռ երեսխայական հասակում, նրա «Որսորդի պատմութիւններով», յետոյ նրա մեծ ու փոքր իրական վէպերով: Այս բոլորիս գուցէ Տօլքենևը այնքան չի կարգացուում, որքան առաջ, բայց այն ժամանակ, սկսած 50-ական թուականներից մի քանի տասնեակ ամիսների ընթացքում, նա սերունդների ուղեցոյց և ուսուցիչ է եղել, նրանով յափշտակուել և ոգևորուել են ամենաանկեղծ և սուրբ ոգևորութեամբ:

Իր առաջի նշանաւոր երկը—«Որսորդի պատմութիւնները» առաջին գլուխները—նա հրատարակում է 1847 թ. երեսուն տարեկան հասակում և հէնց այն ժամանակ, երբ ուսու գեղարուեստական գրականութեան կոթողների Պուշկինի, Լերմոնտովի, Գօգօլի տեղերը բաց էին մնացել: Նա իրաւամբ գրաւում է նրանց տեղը և շարունակող է հանդիսանում ուսու գրական գեղագիտութեան, որպէսզի մահուան անկողնում այդ պատիւը յանձնէ հանճարեղն կոմս ըն Տօլստոյին:

«Որսորդի պատմութիւնները», որոնք նոյնչափ գեղեցիկ են իրանց պատկերաւոր և հարուստ ոճով, որքան և մարդասիրական բովանդակութեամբ, մի պատմական երևոյթ են ներկայացնում ոչ միայն ուսու գրականու

թեան, այլ և հասարակական կեանքի մէջ. Ոչ մի երկ, կարելի է ասել, այնքան մեծ չափով չի նպաստել ճորտերի շուտափոյթ ազատագրութեան, որքան այդ անկեղծ և պարզ պատմուածքները, վերցրած ուսւ ճորտ-գիւղացիների կեանքից. Ինչպէս անսխալական հայելու մէջ, ուսւ ժողովրդի այդ մեծագոյն, բայց մուսացուած, մասը արտանկարուած էր իր բոլոր անմխիթար գոյներով. Այդ մուսացուած ժողովրդի միջից հեղինակը փնտրել, գտել է և պատկերօրէն նկարել է բանական Խոսերի, իդէալիստ Կալինըշների, հեղ և բարի Օգոստինիկովների, համբերատար Լուկերեանների, ժիր մանուկների պատկերները. Հեղինակը ջոյց տուեց, որ Յրանգ էլ մարդիկ են և օժտուած են բազմաթիւ դրական յատկութիւններով, որոնք ուրիշ, աղատ պայմաններում կարող են զարգանալ և ընդհանուր յառաջագիւտութեան և բարեկեցութեան անսպառ աղբիւր դառնալ. . .

Ճորտերին ազատութիւն չնորհող կայսր Ալէքսանդր II ը, իր ասելով, մեծապէս ազգուած է եղել Տուրքենեի այդ գեղարուեստական քարոզից:

Տուրքենեը առանձին ընդունակութիւն ունէր յուզել ընթերցողներին, ամբողջ հասարակութիւնը, իր երկերով. Նուրբ գեղարուեստագէտ-նա միեւնոյն ժամանակ վերին աստիճանի իրական տաղանդ էր և իւր բոլոր դրուածքների նիւթ դարձնում էր կեանքը, նրա նշանաւոր երեւոյթները, նրա երեսին բարձրացող հասանքները. Ահա թէ ինչու նրա գլխաւոր վէպերը՝ Թուդիմ (1856), «Ազնուական օջախը» (1859), «Նախընթաց օրը» (1860), «Հայրեր եւ որդիները» (1862), Ծուխը (1867), Նովը (1877), — կարելի է ասել ուսւ մտաւոր կեանքի քանազան շրջանների տարեգրութիւններն են. Մտաւոր հասարակական կեանքը հերթով առաջ է բերում այս կամ այն սկզբունքը, նշանաբանը, իդէալը, և Տուրքենեը իր հերոսներին ընտրում է այդ «ուղղութիւնների» կամ աւելի լաւ է ասել՝ տիրող ուղղութիւնների ներկայացուցիչների միջից. Գուցէ այդ պատճառով էլ նրա վէ-

պերը վերին աստիճանի այժմէնական են եղել և դեր ու դէմ բանակութեանը նիւթ դառել:

Բացի իրական լինելուց—նա անկեղծ է միշտ և իր համոզմունքները չի զոհում այս կամ այն ազգեցիկ շըլջաններին և կուսակցութիւններին դուր գալու համար: Եւ քառասնական թուականների գործիչները—Ռուզին Լավոնցկիյ և այլք—նոյնչափ նրա դրչի տակ իրական տիպեր են, որքան և գործունէութեան տենչով վառուած Ինստուովը կամ 60-ական թուականներին ծնունդ առած Բազաուովի նման ընապաշտները:

Այս գեղեցիկ և կենդանի պատկերների ժողովածուն արդէն բաւական էին Տուրգենևի անունը անմոռանալի դարձնելու համար, բայց դրանք Տուրգենևի վրձնի արտադրութեան մի մասն են:

Իսկ ինչ ասենք նրա անդուգական կանանց տիպերի մասին, որոնք այնպիսի ոյժով դրաւում են մեզ իրանց կուսական քնքշութեամբ (Նատալիա), հոգեկան անարատութեամբ (Լիզա), անվեհեր կամքով (Յլենա) և միշտ հուն-անկեղծ սիրով... Որքան մենք ոգևորուել ենք ժամանակին այդ հերոս ու հերոսուհիներով, որքան արցունք ենք մենք թափել մեր այդ սիրելի շահու հատորների հետ...:

Գ.

Երկրորդ յօդուինար՝ հսկայահանճար Լև Տոլստոյ, փառք և պարծանք արդի Ռուսիոյ, որ Գուլիվերի նման կանգնած նայում է իրեն դէմ բռունցքներ բարձրացնող լիլիփուտ (գաճաճ) հայրենակից հոգևորականների վերայ: Դա այն Տոլստոյն է, որին XX-րդ դարու սկզբին բանագրեց ասների ուղղափառ Սինոդը և որին այսօր ամբողջ աշխարհիս մտաւորականութիւնը զմայլանքի և յարգանքի հաւաստիքն ներկայացրեց՝ նրա 80-ամեակի առթիւ: Այս անգամ էլ մարգարէն իւր երկրում հալածանքի ենթարկուեց... Յաւիտենական և սղբերգական ճշմարտութիւն: Եւ միթէ չխրատուեցին այսօրուայ իշխողները, որ բան-\*

1626

տը և բանադրանքը, խարոյկը և հալածանքը երբէք կարողացած չեն և չեն էլ կարող կասեցնել մտքի արշաւանքը և նրա ազատ թռիչքը:

Թոյլ է իմ գրիչը խօսելու այս մեծ մարդու և զարմանալի տաղանդի մասին, և ինչ ասես, երբ սահմանափակուած ես տողերով և էջերով: Ընդհանուր ուրուագիծ—աւելի ոչինչ, ահա ինչ կարելի է տալ մի քանի տասնեակ տողերի մէջ:

Տօլստոյը գեղարուեստագէտ է, Տօլստոյը ուսուցիչ է և նրա հետ ծանօթանալ ուզողը պէտք է վեր առնի և կարդայ նրա բազմահատոր վէպերը, նրա անթիւ մանր հէքեաթները, նրա ժողովրդական գրոյցները, նրա փիլիսոփայական ուսմունքը, նրա կրօնական վարդապետութիւնը: Յանձին Տօլստոյի Ռուսիայում, կարծես, իրագործուեց այն գէպը, ինչ որ վիպական ձևով պատմում է մի ուրիշ ուսու հեղինակ, Դոստոևսկին, իր «Կարամազով եղբայրներ» վէպի «Մեծ ինկուիզիտոր» գլխի մէջ: Խօսքս այն գէպի մասին է, երբ Քրիստոս իբր թէ գալիս, տեսնում է ինքուիզիտորների արարքները և երբ որ ուզում է բողոքել, նրան էլ Մեծ ինկուիզիտորի հրամանով ձերբակալում են և քիչ է մնում խաչ բարձրացնեն ad majorem Dei gloriam. — Եւ այդ բոլորը անում է Քրիստոսի անունով:

Իսկ Կրօնշատի Իօան քահանան աղօթք է հնարել, որի մէջ խնդրում է Աստուծուն շուտով վերջ դնել Տօլստոյի կենաց օրերին... Սա ծանր է. կհարցնէք դուք:

Ահա մի մարդ, որը քարոզում է մարդկանց տասնեակ տարիների ընթացքում:—Փոխելով նիւթը և գաղափարը, փոխուել է և ինքը, բայց մի բանում նա միշտ անփոփոխ և նոյնն է մնացել՝ ճշմարտութեան հետապնդման մէջ: Ինքն իրան իր գոյութեան մասին առաջին հաշիւը տալու օրից (տես նրա «Մանկութիւն և պատանեկութիւն») նա աշխատել է գտնել մարդկային կեանքի նպատակը:

Ի՞նչ է ճշմարտութիւնը—ահա այն Քրիստոսի կողմից անպատասխան մնացած հարցը, որը տանջում, զբաղե-

ցնում է Տօլստոյ պատանուն և երիտասարդին, հասուն տղամարդուն և—սկ դիտէ—գուցէ մինչև օրս:

Բայց չէ. այն օրուանից, երբ նա գրեց իր նշանաւոր Խոսովանանքը—այդ հարցը նրա համար արդէն պարզ էր. նա պատասխանը գտել էր և ես կարծում եմ, որ նա յաւիտենականութեան գիրկն էլ այսուհետև կմտնի լիովին հանգիստ սրտով և հաւատացած լինելով, որ նա ճշմարտութիւնը վերջնականապէս գտել է:

Ես էլ ուրիշների նման նրա հետ տեսակցելուց և խօսակցելուց յետոյ եկայ այն եզրակացութեան, որ նրա հաւատը և համոզումը անդրդուելի են. Այդ դէպքում, միմիայն այդ դէպքում, Տօլստոյը մի ֆանատիկոս է, իր սիրեցեալ, տանջանքներով ձեռք բերած գաղափարի հաւատարիմ սպասաւոր՝ ոչ ծաղր, ոչ տգիտութիւն, ոչ էլ հալածանք նրան իւր շաւղից չշեղեցին. Տօլստոյը մնում է Տօլստոյ, թէպէտ և Ս. Սինօզից բանադրեալ:

Հաւատում եմ Աստծուն, որ ըմբռնում եմ իբրև Ոգի, իբրև Սէր, իբրև սկիզբն ամենայնի. Հաւատում եմ, որ նա իմ մէջ է, իսկ ես նրա. Հաւատում եմ, որ Աստուծոյ կամքը ամենէն աւելի պարզ և հասկանալի արտայայտում է մարդ Քրիստոսի վարդապետութեան մէջ... Հաւատում եմ, որ մարդու իսկական բարիքը՝ Աստուծոյ կամքի կատարման մէջն է, իսկ նրա կամքն է, որ մարդիկ սիրեն միմեանց և այդ պատճառով ուրիշների հետ վարուեն այնպէս, ինչպէս որ կցանկային, որ իրանց հետ վարուէին. այդ է ամբողջ օրէնքը և մարդարենէրը, ինչպէս որ ասած է և Աւետարանում\*):—

Ահա Տօլստոյի կրօնա-փիլիսոփայական դաւանանքի ամփոփումը իրա խօսքերով: Իբրև հետեւանք արդէն այդ աստուածապատգամ սիրոյ—պահանջւում է չարին չարով չպատասխանել, Այդ քրիստոնէական համբերատարութեան և անյիշաչարութեան ուսմունքը Տօլստոյը քարոզում է այնքան անշեղ, որ երբ մէկը նրան հարց է տուել «կարճ եմ

\*) Исповѣдь ерротадырէց:

ես արդեօք սպանել ինձ վրայ յարձակուող դայլինս—նա պատասխանել է՝ «ոչ, չպէտք է, որովհետև եթէ ես կարող եմ նրան սպանել, ուրեմն և շանը և մարդուն—և սահման որոշել անկարելի կլինի. եթէ թոյլ տայ, որ ես կարող եմ սպանել, որ պարտական եմ դիմադրել չարին, այն ժամանակ չարիքն և անարգարութիւնը անսահման պիտի թագաւորեն, ինչ որ և տեսնում ենք մենք այժմ».

Այդ սկզբունքն էր թելադրում նրան և այն ժամանակ, երբ նա առերիս գրողին համոզում էր, որ Տաճկաստանի հայերը չպէտք է բռնութեամբ և զէնքով պատասխանեն իրանց բռնակալներին՝ վայրենի քրդերին և մալեանդ թուրքերի շահատակութիւններին\* . . .

Ուսանելին այն է, որ Տօլստոյը իր վարդապետութիւնը ձեւակերպել է վերջնական կերպով երկար տարիների երկունքից յետոյ, որի յիշատակարաններն են նրա զարմանալի խոր վիպական գրուածքները. Արդէն «Մանկութիւն և Պատանեկութիւն» կիսակենսագրական գեղարուեստական վիպակի մէջ նա լուրջ մտատանջութիւնների մէջ է Աստուծոյ, մարդու, սիրոյ և բարիքի մասին (1852 թ.). Նայն մտատանջութիւնները և ճշմարտութեան որոնումները մենք տեսնում ենք և հեռեեւալ երկերի մէջ՝ «Կալուածատիրոջ առաւօտը» և «Ղազախներ» (1861) վիպակների մէջ, որոնք անշուշտ ինքնակենսագրական նշանակութիւն ունին. Իրանց հերոսները՝ Նէխիլատովը և Օլէնինը—Տօլստոյի այն ժամանակուայ հոգեկան դրութիւնն են պատկերացնում, երբ նա օրոնում էր օգտակար գործունէութեան իսկական ճանապարհը և ժամանակակից քաղաքակրթութիւնից դժգոհութեան նշոյլներ էր ցոյց տալիս. Ճշմարտութիւնը հարկաւոր է ուրիշ շրջանի և դասակարգի մէջ փնտրել և որովհետև կալուածատէրների հակադիր դասակարգը գիւղացիութիւնն է—Տօլստոյը նրանց մէջ է օրոնում կեանքի աւելի զուտ լուծումը. Ժողովուրդը, մտռան—

\*) Այս մասին տես իմ յօդուածը «Մեր Չայնը»-թերթի № 97.



միաձայլ է, նա իւր յարդած ուղիովն է առաջնորդուում, նա անխճեալ հարցերով չի տանջուում, նւա համար ամեն բան պարզ է և լուծուած: Անհատը անդօր է գտնել ու այդ ճշմարտութիւնը, իսկ ժողովուրդը արդէն իսկ իր մէջ ամփոփած ունի մարդկային կեանքի իմաստութիւնը: Նա միշտ և բնազդօրէն գնացել է իսկական ճանապարհով և յաղթող է դուրս եկել մինչև իսկ ամենադժուարին դրութիւններէց. ապացոյցը տեսէք Վատերազմ և խաղաղութիւն» վէպի մէջ, որի գլխաւոր հերոսը ժողովուրդն է, ուսա գիւղացիութիւնը, մասսան (1864—1869):

Այդ մասսայական հոգեբանութիւնը և աշխարհայեցողութիւնը բնական սեփականութիւն է ամեն մի հասարակ գիւղացու (յիշեցէք Կարատանին) և ընդհակառակը անըմբռնելի է բարձր գասակարգի ներկայացուցչի համար, մինչև որ նա չհաւասարուի այդ գիւղացիութեան հետ, չձուլուի ժողովրդի հետ: Կարծես ինքն իրան հաշիւ տալու նպատակով Տօլստոյը 1873—76 թ. ստեղծում է իր խոր հոգեբանական Աննա Կարենինայ վէպը ու 1881 թուին գրում է իւր նշանաւոր Խոսովանոսիփիւնը, որով կամենում է մաքրուել իր նախկին կեանքի սխալներից, ու կարծես խոստանում է ազադային ընթանալ աստուածային ճանապարհով, միակ ուղիղ և իսկական ճանապարհով, որը նախասահմանուած է մարդուս ի վերուստ: Այդ ժամանակից ի վեր նա գրեթէ բացառապէս նուիրուում է իւր կրօնափիլիսոփայական վարդապետութեան, որը վերակենդանացնել է ուզում առաջին դարու քրիստոնէական կեանքը, իւր անմիջական ջերմ հաւատով, պարզութեամբ, գրեթէ անիշխանական կազմակերպութեամբ\*։ Եթէ նա ժամանակ առ ժամանակ էլի երևան է գալիս իբրև գեղարուեստագէտ (Իվան Իլիչի մահը, Սաւարի իբխանոսիփիւնը, 1886, Քաղաքակրթութեան պտուղները, Կրէյցերեան Սօցիալ 1890 թ., Յարութիւն 1899)—նա այդ անում է իւր գեղարուեստական տաղանդը իւր վարդապետութեանը ծա-


\*) Տես էջբախէրի Անիթխանկանոսիփիւն գեղքը:

ապեցնելու համար և կրկին ու կրկին յիշեցնելու մարդկանց Մեծ վարդապետի յաւիտենական խօսքերը շնորհապատուիրան եմ տալիս ձեզ, որ սիրէք միմեանց, ինչպէս ևս ձեզ սիրեցի, որպէս զի դուք էլ միմեանց սիրէք...

Բայց և այսօր էլ, ինչպէս և այն պատմական օրերին, մեր ականջները խուլ են, իսկ մեր սրտերը անապատ՝ ըմբռնելու և իւրացնելու այդ վեճ գաղափարը:



ՀՅԱՄ ԳԻՏ. Ի. Բ. ՈՒՆՆԵՐԻ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ ՁԵ 2  
116 Ա ՊԵՏՊԵ





ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0065869

A <sup>xiii</sup> 1626